50 ՓԱՍՏԱԲԱՆԻ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ «ՓԱՍՏԱԲԱՆ ԵԶԵԳԵԼՅԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ»

01.02.2018 12:56



Հարգելի փաստաբաններ,

Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի, ՀՀ փաստաբանների պալատի պատվավոր անդամ, բարերար Ռայմոն Եզեգելյանի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի միջև շարունակական համագործակցության շրջանակներում՝ **Ռայմոն Եզեգելյանը պատրաստակամություն է հայտնել այս տարի նույնպես կանխավճարի կարգով վճարել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից սահմանած կարգով որոշված ևս 50 (հիսուն) փաստաբանի մեկ տարվա անդամավճարները:**

Նշված նախաձեռնության կապակցությամբ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **01.02.2018թ. թիվ 30-Լ որոշմամբ** հաստատվել է **«50 փաստաբանի «Փաստաբան Եզեգելյան օժանդակություն» տրամադրելու մասին» կարգը**, համաձայն որի՝ շահառուներին որոշելու նպատակով ձևավորված հանձնաժողովը՝ ըստ կարգով նշված առաջնահերթության, նախապատվություն է տալու հետևյալ փաստաբաններին՝

1) *60-69 տարեկան փաստաբաններին*՝ ովքեր չունեն մշտական աշխատանք, **ոչ ավել, քան 10 (տաս) փաստաբան:** Այս խմբում նախապատվությունը տրվում է տարիքով ավագ փաստաբաններին.

2) *2-րդ կամ 3-րդ կարգի հաշմանդամ փաստաբաններին*՝ **ոչ ավել, քան 5 (հինգ) փաստաբան:** Այս խմբում նախապատվությունը տրվում է առավել վաղ հաշմանդամության կարգ ստացած փաստաբաններին.

3) *միայնակ մայր հանդիսացող փաստաբաններին*՝ **ոչ ավել, քան 7 (յոթ) փաստաբան:** Սույն կարգի իմաստով միայնակ մայր է համարվում ամուսնության մեջ չգտնվող այն կինը, ում խնամքի տակ գտնվում է առնվազն մեկ անչափահաս երեխա, որի ծննդյան վկայականում **(ա)** բացակայում է երեխայի հոր մասին գրանցումը, կամ, **(բ)** երեխայի հոր մասին գրանցումը կատարվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մոր ցուցումով, կամ, **(գ)** երեխայի հայրը մահացել է, կամ **(դ)** ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով երեխայի հայրը ճանաչվել է անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած: Այս խմբում նախապատվությունը տրվում է առավել շատ երեխա ունեցող, իսկ երեխաների հավասար քանակի դեպքում՝ տարիքով կրտսեր երեխա ունեցող փաստաբաններին.

4) *ընտանիքում պարտադիր զինվորական ծառայության զորակոչված (զինվորական ծառայության մեջ գտնվող) զավակ ունեցող փաստաբաններին*՝ **ոչ ավել, քան 10 (տասը) փաստաբան:** Այս խմբում նախապատվությունը տրվում է **(ա)** ընտանիքում մեկից ավելի զորակոչիկ ունեցող փաստաբաններին կամ **(բ)** զինվորական ծառայության առավել ուշ զորակոչված զորակոչիկ ունեցող փաստաբաններին.

5) *նյութական դժվարություններ ունեցող մարզի փաստաբաններին*՝ **ոչ ավել, քան 10 (տաս) փաստաբան,** յուրաքանչյուր մարզից մեկ փաստաբան՝ մարզային համակարգողի գրավոր առաջարկով.

6) *երկու կամ ավելի անչափահաս երեխաներ ունեցող փաստաբաններին*՝ **ոչ ավել, քան 8 (ութ) փաստաբան:** Այս խմբում նախապատվությունը տրվում է առավել շատ երեխա ունեցող, իսկ երեխաների հավասար քանակի դեպքում՝ տարիքով կրտսեր երեխա ունեցող փաստաբաններին:

Օժանդակությունից օգտվելու համար շահառուները կարող են դիմել հանձնաժողովին մինչև 2018 թվականի մարտի 1-ը (ներառյալ): Կարգին համապատասխան որոշված ընդհանուրը 50 շահառուներին կտրվեն համապատասխան հավաստագրեր:

Առաջարկվող նորություններ

27.04.2015ՌԱՅՄՈՆ ԵՋԵԳԵԼՅԱՆԻ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵԼ Է ՀՈՒՇԱԳԻՐ

29.04.2015ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼՈՂ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՇՆՈՐՀՎԵԼՈՒ Է ՄԵԿ ՏԱՐՎԱ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

10.07.2015ՄԱՐԶԵՐԻ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՍՏԱՑԵԼ ԵՆ ՌԱՅՄՈՆ ԵՋԵԳԵԼՅԱՆԻ ԹՈՇԱԿԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԸ

14.12.2015ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՇՆՈՐՀՎԵԼՈՒ ԵՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })